

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆԼԻՏԱԿԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

«ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՄ ՍԵՐ»-Ը՝ ՈՐՊԵՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍ

Մեզ հատկապես հետաքրքրողը «Հայաստան, իմ սեր» ժողովածուն է, որի ասելիքը խիստ արդիական է, մտածված, ուսանելի, հուզիչ ու վարակիչ: Այնքան ցանկալի կլինեք, որ մանկավարժական մայր բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողները հայրենասիրական դաս ստանային այս գրքից: Այն ճշմարիտ ու կարևոր դաս է, հայապահպան ու ազգային ոգին ամրացնող դաս:

«Հայաստան, իմ սեր» ժողովածուի հեղինակը հայրենիքի նվիրյալն է, մեր ազգային ճակատագրի քաջատեղյակ տարեգիրը: Այս գիրքը շատ պարզ բացատրում է, թե որքան կարևոր է ընտանեկան դաստիարակությունը. օրորոցից ու մայրական կաթի պահից երեխան պետք է սիրի իր հայրենիքը:

«Հայաստան, իմ սեր» քերթվածը և նույնանուն ժողովածուն տոգորված են հայրենիքի ապագայի նկատմամբ ունեցած խոր լավատեսությամբ:

Գիրքը հայրենասիրական ճշմարիտ ու օգտակար դաս է հատկապես նոր բարձրացող սերնդի համար:

Բանալի բառեր և արտահայտություններ. Տիգրան Մեծ, Հայաստան, հայրենիք, ապագա, զինվոր, անցյալ, բանաստեղծ, դաս, սերունդ, դաստիարակություն:

Հայրենասիրության թեման առ այսօր ուղեկցում է հայ գրականությանը: Դրա առաջին դրսևորումները կան արդեն հեթանոսական երկերից մեզ հասած

գողթան երգերում, որոնք ոսկեդարից մինչև 11-12-րդ դարեր ուղեկցել են հայ ժողովրդի պատմական ընթացքին:

Ազգային ճակատագրի խնդիրը բանաստեղծության նյութ դարձրեց XIII դարի բանաստեղծ Ֆրիկը, որը Աստծուն խոր ցավով բացատրում է, թե հայերն այլևս չեն դիմանում մահմեդականների վայրագություններին: Մինչև Ֆրիկը Ներսես Շնորհալին «Ողբ Եդեսիոյ» ծավալուն քերթվածում, որն այսօրվա գրականագիտական սահմանամերձ պոեմ է կոչվում, ողբում է չքնաղ Անի մայրաքաղաքի կործանումը՝ հիշեցնելով, թե շքեղ այդ քաղաքը նման էր չքնաղ նորահարսի՝ մերձավորների համար սիրելի, իսկ օտարներին՝ փափագելի:

Հայ միջնադարը իր հայրենասիրական բանաստեղծության ոգին փոխանցեց գրաբարագիր նոր գրականությանը և ծնվեց Արսեն Բագրատունու «Հայկ Դիւցազն» կլասիցիստական գլուխգործոցը, որում հայ հեղինակը Հոմերոսի երկու գործերի՝ «Իլիականի» և «Ոդիսականի» հետևությամբ, բարդ ու վերացական մտածողությամբ, ձոխ լեզվական բառագանձով չափածոյի վերածած պատմում է հայոց հին վեպը՝ նյութը քաղելով Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»:

XIX դարի 40-ական թվականներից

հայրենասիրական երգերը սկսեցին հնչել աշխարհաբարով թե՛ արևմտյան և թե՛ արևելյան հայ գրական շրջանակներում: Անոնդ Ալիշանը գրեց «Նահապետին երգերը», Մկրտիչ Պեշկեթաշյանը՝ իր հրաշալի Ջեթունյան շարքը, հետո հանդես եկան հայ բանաստեղծության այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին՝ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, և երգեցին հայրենիքը: Դանիել Վարուժանը իր ժողովածուն կոչեց «Ցեղին սիրտը» և նրանում պայքարի կոչեց հայ ժողովրդին:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի:

Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ...

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի:

Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ [6-36]:

Արևելահայ պոեզիան շատ հարուստ է հայրենասիրական երգերով: Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան, Ե. Չարենց և շատ ու շատ ուրիշներ մեր օրերում:

Երբ ուշադիր, ընդհանրական հայացքով դիտարկում ենք հայրենասիրական հայ երգի բովանդակությունն ու նրանից բխող գաղափարները, ապա բոլոր երգերում գրեթե առկա է հայ ժողովրդի վաղնջական ժամանակներում քաղաքակիրթ լինելու փաստը և նրա բիրյիական ծագումը: Այդ իրողությունը շեշտված է թե՛ դասական և թե՛ ոչ դասական գրողների մոտ: Օրինակ, Հովհան Միրզա Վանանդեցին (1772-1840) գրում է.

Հայաստա՛ն, երկիր դրախտավայր,

Դու մարդկայնոց ցեղիս օրրան,

Դու և բնիկ իմ հայրենիք:

Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Այս սեղմ նախաբանը ասվում է, որ հասկանալի լինի հայրենասիրական հայ երգի դարավոր ուղին և նրա նորօրյա դրսևորումներից մեկը, որի հեղինակը Արցախյան ազատամարտի մասնակից, ՀՀ բանակի պահեստի փոխգնդապետ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն, բազմաթանակ

պատմական արժեք ունեցող գրքերի հեղինակ Տիգրան Պետոսյանցն է, որի գրական անունն է Տիգրան Հայկազն, այսինքն՝ Տիգրան Երվանդյան: Մեր այս արքայի մասին Մովսես Խորենացին այնպես է գրել, որ հետագայի բոլոր թագավորները և Հայաստանը կառավարողները հետևեն նրան:

Իմ ձեռքի տակ են Տիգրան Պետոսյանցի երեք գրական արժեք ունեցող գրքերը: Դրանցից մեկը պատմավեպ է՝ «Էրատո» (2013), երկուսը բանաստեղծական ժողովածուներ՝ «Հայաստա՛ն, իմ սեր» (2013) և «Տիգրանական» (2014): Մեզ հատկապես հետաքրքրողը «Հայաստա՛ն, իմ սեր» ժողովածուն է, որի ասելիքը խիստ արդիական է, մտածված, ուսանելի, հուզիչ ու վարակիչ: Այնքան ցանկալի կլինեք, որ մանկավարժական մայր բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողները հայրենասիրական դասստանային այս գրքից: Այն ձմարիտ ու կարևոր դաս է. հայապահպան ու ազգային ոգին ամրացնող դաս:

«Հայաստա՛ն, իմ սեր» ժողովածուի հեղինակը հայրենիքի նվիրյալն է, մեր ազգային ճակատագրի քաջատեղյակ տարեգիրը: Այս գիրքը շատ պարզ բացատրում է, թե որքան կարևոր է ընտանեկան դաստիարակությունը. օրորոցից ու մայրական կաթի պահից երեխան պետք է սիրի իր հայրենիքը:

Երբ որ արդեն ինչ-որ բան հասկանում էի,

Մայրս ասաց. – դու հայ ես,–

Ու պատվիրեց Հայաստանը սիրել ավելի քան իրեն,

Եվ այդ պահից Հայաստանն իմ սերն է... [4-5]

Մանուկ հասակից է նա իմացել, թե ինչ խորհուրդ ունի երկգագաթ Արարատ լեռը, որի ստորոտում հայերի բնակատեղին է պապենական, կարող է հպարտ լինել իր երկրի հին քաղաքակրթությամբ և, բացի այդ, հիշել, թե ինչ քաջ գործեր է հայ ազգը կատարել: Բանաստեղծը սիրում է հայերի այն թագավորնե-

րին, որոնք բոլորանվեր սիրեցին իրենց երկիրն ու իրենց պատասխանատու զգացին նրա շենացման համար: Այդ թագավորներն են՝ Արտաշես Աշխարհակալ, Տիգրան Մեծ, Արշակ Երկրորդ, Պապ, Տրդատ Մեծ, Վռամշապուհ, Գագիկ Շահնշահ, Լևոն Մեծագործ, Հերոս Առաջին: Նրանց թվում են նաև Իվանե և Զաքարե գորահրամանատարները: Նա փորձում է նորահայտ պատմական փաստերով հիշեցնել, որ բրետոնները Անգլիա են գնացել Հայաստանից, որ հնագույն էպոսներում հայերն ու Հայաստանը հիշատակվում են: Տ.Պետրոսյանցին ծանոթ է, անշուշտ, այն փաստը, որ բյուզանդական «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» էպոսը ստեղծվել է հայկական միջավայրում և արձագանքում է «Սասնա ծռեր» էպոսին [5-218]:

«Հայաստան, իմ սեր» քերթվածը և նույնանուն ժողովածուն տողորված են հայրենիքի ապագայի նկատմամբ ունեցած խոր լավատեսությամբ.

Իմ ժողովուրդ,
Ես կրում եմ իմ մեջ
Քո փառքերը անանց,
Եվ քո փառքը նորոգ
Կրելու եմ Հավերժ [4-9]:

Ժողովածուի մեջ բավականին թվով քերթվածներ գրվել են 1967-ին: Դրանցից է «Երևան» բանաստեղծությունը, որը նվիրված է Էրեբունի բերդ-քաղաքի անցյալին ու ներկային.

Թշնամիների փոշի են դարձել դարերի մեջ,

Եվ դու Էրեբունուց դարձել ես Երևան... [4-11]

Այս քերթվածով Տիգրան Պետրոսյանցը ձայնակցում է նշանավոր հնագետ Մորուս Հասրաթյանին, որը գրում է. «Ուստի վերապահություն չի պահանջվում ընդունելու համար, որ Էրեբունի-Երևանի առաջին և մշտական բնակիչները 2750 տարի անընդմեջ եղել են հայերը: Այս էլ Երևանի մյուս տարբերությունն է շեն մնացած հին քաղաքների մի մասից (ինչպես Աթենք, Հռոմ և

այլ քաղաքներ), որ շուրջ երեք հազարամյակ միևնույն լեզվով են խոսել նրա բնակիչները: Այսինքն՝ ժամանակի ընթացքում բնավ չի փոխվել Երևան քաղաքի էթնիկ կազմը, որը եզակի երևույթ է հատկապես Առաջավոր Ասիայում» [1-12-13]:

Ճիշտ այսօրվա համար գրված փաստական դիտարկումներ թուրք-ադրբեջանական կեղծարար պատմաբաններին սպառնիչ պատասխանող. չէ՞ որ նրանք այսօր ամենուր պնդում են, թե Երևանը ադրբեջանական քաղաք է: Մինչդեռ, ի պատասխան նրանց, միջազգային լուրջ հրապարակումներում նշվում է, թե Հայաստանի՝ հազարամյակների պատմություն ունեցող մայրաքաղաք Երևանը ունի մեծագույն մի զարդ, որ չունի և ոչ մի մայրաքաղաք աշխարհում: Դա Արարատ լեռն է, որն առանձին շուք է տալիս քաղաքին՝ հիշեցնելով հայերի բիրլիական հնությունը:

Ժողովածուում մի շարք բանաստեղծություններ, որոնք ունեն նույն «Հայաստան» խորագիրը, մեր երկրի էությունն ու ներկյան դիտարկում են ամենատարբեր տեսանկյուններից: Նրանցից մեկում կա նաև եղեռնի փաստի որակումը.

Եվ ազգ, հոգևոր դառնալու բյուր տարիներին

Անցել է անգամ դժոխքի միջով... [4-14]

Ինչպես Մարտիրոս Սարյանը Հայաստանը ներկայացնում է իմպրեսիոնիստական ներկայանակով, այնպես էլ Պետրոսյանցի համար սպիտակ հագած Հայաստանը հարս է, կանաչագույն Հայաստանը սեր պարզևող կին, իսկ ոսկեգույնը՝ սիրառատ տատիկ: Ինչպես մարդ արարածը հավերժ կարոտում է իր սիրելիին, այնպես էլ բանաստեղծը առ Հայաստան ունի անանց կարոտ:

Եվ եթե ինձ հազար կյանք էլ տան, իմ կարոտ,

Ինձ համար մնալու ես հավերժ՝ կարոտ... [4-19]

Հայրենիքն ու Արարատը բացառիկ

գեղեցիկ քերթվածներով փառաբանել է աստվածատուր հզոր օժտվածության տեր Հովհաննես Շիրազը: Վերջինս հայրենասիրության բազում դասեր է տվել նոր բարձրացող մի քանի հայ սերնդի: Պետրոսյանցը Շիրազին կոչում է նորօրյա Գողթան երգիչ՝ ընկալելով գուսանական տարրը նրա երգերում, միաժամանակ խոստանում է հասնել Արարատ, խորտակել այն մեզինք բաժանող սահմանները և սարը գրկած բերել Հայաստան:

«Բարի լույս, միացյալ Հայաստան» քերթվածում բանաստեղծը երազում է հրաշքով տեսնել իր հայրենիքի կորցրած տարածքների վերամիացումը, և նա ոգևորված ասում է.

Եվ գոռամ, և գոռամ՝

Բարի լույս, Միացյալ Հայաստան... [4-26]

Այս տողերը գրում է Արցախը ազատագրած մարտիկը, որը, հաստատ, գոռացել է. «Բարի՛ լույս, Շուշի, բարի՛ լույս, Արցախ, դուք միացաք Հայաստանին»:

Տիգրան Հայկազնը Տիգրան Պետրոսյանցի պաշտելի պետական գործիչն է: Պատմահայր Խորենացին գրում է. «Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդացրեց, և մեր բնակչության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակչության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եղողներիս ցանկալի թե ինքը և թե իր ժամանակը» [2-85]: Ահա հենց այս նույն փաստն է ոգեշնչել բանաստեղծին գրելու «Արքա Տիգրան» քերթվածը, որն ավարտվում է հետևյալ եզրահանգամբ.

Բայց կրում եմ իմ մեջ և Քեզ և ժամանակը Քո

Ու կոչում եմ ժամանակն այն Տիգրանական... [4-28]

Ով տեսել է Տիգրանակերտի վեհաշուք պալատների մնացորդները, որոնց հովանու ներքո այժմ քրդերն են բնակ-

վում, կզգա Տիգրան Մեծի կառուցողական հանձարը: Բանաստեղծի կարծիքով՝ Տիգրանակերտի վաղեմի փառքի հիշողությունը պետք է կերտի հայերի ցանկալի ապագան:

Որպես պատմաբան ու մատենագետ Պետրոսյանցին խոր ցավ է պատճառում արդեն մոդայիկ դարձած այն իրողությունը, որ պատմահայր ու քերթողահայր Մովսես Խորենացուն պոկում են իր դարից ու տեղափոխում ավելի ուշ դարեր, և նա նման վարքագիծ ունեցող հայագետներին պատասխանում է.

Իսկ լուտանքը, հայիոյանքը քո հասցեին

Առ ոչինչ է, ինչպես Օվկիանոսը նետած քար [4-33]:

Ակամայից հիշում ես 1937-ի հունիսին գրված Եղիշե Չարենցի հետևյալ բանաստեղծությունը.

Չնչին, ինչպես Արարատին նետած քար՝

Դավերն այդ սև, քստմնելի և կամկար –
Չհասնելով քղանցքներին անգամ քո –
Վայր են թափվում համայնացած մեր կամքով

Եվ անտերունչ կորչում անզոր ու անկար –

Ինչպես անհաս Արարատին նետած քար... [3-275]

Բանաստեղծը չափածո ներբող ունի Նեմրուք սարին, որի գագաթի երկու կողմերում դեռ կանգուն են հայ Երվանդունիների դամբարանների քարե արձանները՝ հայ հեթանոսների հին աստվածների պատկերներով: Ցավոք, այսօր ոչ մի գրոսաշրջիկի չեն ասում, թե հնագույն արվեստի շքեղ կոթողները հայկական են: Բրիտանական թանգարանում հատուկ դահլիճ կա, որ կոչվում է «Նեմրուք դադ», և թուրքական այդ անվան հետ ցուցադրված արձանները դարձյալ ոչինչ հայկական բացատրություն չունեն, սակայն հայոց պատմությունն այլ բան է ասում դրանց մասին, և դա գիտի Պետրոսյանցը, որը թվարկում է Նեմրուքի հայ աստվածների անունները՝ Տիր,

Վահագն և ուրիշներ, ապա հիշեցնում.

Այստեղ Նենրութն է հայկական,

Ժամանակը այստեղ կանգ է առել... [4-35]

Նա բանաստեղծություն է նվիրել նաև Բագրատունիների Անի մայրաքաղաքին, որը շարունակ նրա մտապատկերում է, և այդ իրողությունը պարտադիր է ամեն հայի համար.

Ես քեզ պիտի հիշեմ ամեն վայրկյան,

Որ դու օտար գերության մեջ չխորթանաս ինձնից,

Իսկ ես որք չդառնամ հենց քո կողքին... [4-40]:

Տ. Պետրոսյանցը բանաստեղծություններ է նվիրել Եռաբլուրին՝ հայոց քաջերի սուրբ դամբարանին, հայոց պետականության խորհրդանիշ Եռագույն դրոշին: Նրա որոշ քերթվածներ դարձել են երգեր ու հնչում են Արցախյան հաղթանակի տոնահանդեսներում:

«Հայաստա՛ն, իմ սեր» ժողովածուում կան նաև կենսագրական հատվածներ, որոնք պատմում են հեղինակի հնագույն

ազնվական տոհմի ծագումը պատմական Հայաստանի Խոյ-Սալմաստ գավառից, և տոհմական արծաթե դարավոր խաչի գոյությունը, որը միշտ հագուստի տակ կախված է նրա վզից որպես պահպան թալիսման:

«Առանց ցավի հիշողություն» (Կտակ) քերթվածից պարզ է դառնում բանաստեղծի անընչասեր կենցաղավարությունը, նրա պատգամների ու գործերի միասնությունը.

Ձեմ երագել ոսկի, արծաթ,

Ձեմ հաշվել երբեք ուրիշի ոսկին,

Խորթ է ինձ ուրիշի ոսկին

Հաշվելու գործը անշնորհակալ... [4-58]

Տիգրան Պետրոսյանցի բանաստեղծական աշխարհի այս խոստովանությունը մի պարզ, անպաճույճ, անկեղծ պատում է, ուր չկա ոչ խոսքի ավելորդ սեթևեթում ու ոչ էլ անիմաստ ու չհիշվող բառատարափ: Գիրքը հայրենասիրական ճշմարիտ ու օգտակար դաս է հատկապես նոր բարձրացող սերնդի համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Հասրաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985:
2. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:
3. Ե. Չարենց, Վերջին խոսք, Երևան, 2007:
4. Տ. Պետրոսյանց, Հայաստան, իմ սեր, Երևան, 2013:
5. Վասիլ Դիգենիս Ակրիտաս, թարգմանություն, ուսումնասիրություն, ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1978:
6. Դ. Վարուժան, Երկերի ժողովածու, կազմեց՝ Վազգեն Գաբրիելյանը, Երևան, 2004:

«АРМЕНИЯ, ЛЮБОВЬ МОЯ»: ПРИЗНАНИЕ И УРОК

АЭЛИТА ДОЛУХАНЫАН

Заведующая кафедрой древней и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Хачатура Абовяна, член-корреспондент НАН РА, доктор филологических наук, профессор

Замысел сборника «Армения, любовь моя» весьма актуален, продуман, поучителен, трогателен и заразителен. Было бы желательно, чтобы студенты разных факультетов главного педагогического вуза республики получили от этой книги урок патриотизма. Это был бы правильный и важный урок, направленный на сохранение армянства и укрепление национального духа.

Автор сборника «Армения, любовь моя» – человек, преданный Родине, историк, хорошо осведомленный о нашей национальной судьбе. Эта книга доказывает, насколько важно семейное воспитание. Начиная с колыбели, с материнским молоком ребенок должен впитать любовь к Родине.

Произведение «Армения, любовь моя» и одноименный сборник проникнуты глубоким оптимизмом, мыслями о будущем Родины.

Книга является правильным и полезным уроком патриотизма, особенно для подрастающего поколения.

“ARMENIA, MY LOVE” AS A CONFESSION AND LESSON

AELITA DOLUKHANYAN

Head of the Chair of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology, ASPU, Correspondent Member of the National Academy of Sciences of RA, Doctor of Philology, Professor

We are especially interested in the miscellany “Armenia, my Love” the meaning of which is topical, well thought, instructive, moving and contagious. It would be most desirable if the students of different faculties of the mother Pedagogical University should get a lesson of patriotism from this book. That would be a true and significant lesson aimed to preserve Armenian people and reinforce their national spirit.

The author of the miscellany “Armenia, my Love” is a man devoted to his homeland, a chronicler well aware of our national fate. This book explains very clearly how important is family education. From the cradle and with his mother’s milk a child should suck the love of his homeland.

The work “Armenia, my Love” and the miscellany of the same title are full of profound optimism toward the future of our homeland.

The book is an accurate and useful lesson of patriotism, especially for the forthcoming generation.